

Գ

ԳԱՔՐԻԷԼ ԵՊՍ. — Մբ. ՆԵ. Երուսաղէմի Կաֆայի մէջ (Կերսոն). ՌՄԻԷ (=1778) թուին փետր. 14ին քահանայ կը ձեռնադրէ Կաֆայի Ս. Համբարձման եկեղեցիին վրայ 55 տարեկան դպիր մը՝ տէր Մարտիրոս Աւետիսով անուամբ, որ Ղրիմի գաղթականներուն հետ միասին Նախիջևան գացող քահանաներէն մին էր: Գաղթականութիւնը սկսած է նոյն թուականի Օգոստ. 17ին. յիշեալը Նախիջևան գալով՝ քահանայագործած է Նէսուրթայ գիւղի Ս. Կարապետ եկեղեցիին մէջ, ուր յիշատակ թողած է Քարոզի կամ Սրասալիսն հոգոյշան անուն ձեռագիրը:

Սոյն տեղեկութիւնները քաղուած են նոյն ձեռագիրին յիշատակարանէն. մանրամասնութիւնները տեսնել (Լուսնայ, 1902, էջ 246—47):

ԳԱՔՐԻԷԼ ՍՐԿ. ԶԷՅԹՈՒՆՑԻ. — Մբ. որդի Կոստանդինի եւ Ոսկիի. ԶԶԵ (= 1526) թուին Յայաւաւուրի մը կ'ընդօրինակէ Երուսաղէմի մեջ, «ի հայր. տն. Յովհաննէս կթղի եւ յառաջ, Ս. Ուխտիս տէր Յովսէփի: Այս ձեռագիրին ստացողն եղած է Ներսէս եպօ. Զէյթունցի, որդի Կիրակոսի եւ Շնորհաւորի: (Պաղ. Յոյց. Բ. 70):

ԳԱՔՐԻԷԼ ՎՐԴ. ՄԱԼԽԱՍԵԱՆ. — (ՏԵՍ էջ 58) կը վախճանի 1929 մարտ 12ին և կը թաղուի Սիոնի գերեզմանատունը:

ԳԱՐԵԳԻՆ ԱԲ. ՊԻԻԼՊԻԻԼԵԱՆ, ԱՅՆԹԱՊՅԻ. — Մբ. Ծ. 1903 ին. աշկ. Այնթապի Ներսէսեան վարժի, յետոյ գրագիր Այնթապի մէջ. Կիլիկիոյ պարպումին հետեւանքով 1922 ին իր ծնողաց հետ կը գաղթէ Հոլէպ. 1925ին միաբան կ'արձանագրուի Ս. Յակոբի վանքին և կը հետևի մասնաւոր դասերու, նոյն տարին կը կարգուի գրապետ, և օգնական գրագիր և հաշուակալ միանգամայն ելևմտից դիւանին մէջ: 1928ին արեղայ կը ձեռնադրուի և վերոյիշեալ պաշտօններէն հրաժարելով՝ կը կատարէ ս. տեղեաց ժանարարութիւն: